

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2019 թվականի հունվարի N -Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ծմեռային զորակոչից տալ տարկետում՝
  - 1) Հովհաննես Վրեժի Զիջյանին (ծնվ.՝ 2000 թվականի օգոստոսի 31-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Թամանյան փող., 1ա շենք, բն. 1, Ամստերդամի ազատ համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2021 թվականի ծմեռային զորակոչը.
  - 2) Սամսոն Արթուրի Պետրոսյանին (ծնվ.՝ 2000 թվականի փետրվարի 29-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Նոր Արեշ, 7-րդ փ., տուն 68, Բերքլիի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2022 թվականի ծմեռային զորակոչը.
  - 3) Արամ Հրանտի Հակոբյանին (ծնվ. 2000 թվականի հուլիսի 8-ին, հասցեն՝ քաղ. Էջմիածին, Զվարթնոց, 3 շ., բն.31 Չիկագոյի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2022 թվականի ծմեռային զորակոչը.
  - 4) Հայկ Պարգևի Հարությունյանին (ծնվ. 2000 թվականի օգոստոսի 26-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Պ. Սևակ փող., 8/1 շ., բն. 139, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2022 թվականի ամառային զորակոչը.

- 5) Ֆրունզ Արմանի Ղարազյոզյանին (ծնվ. 2000 թվականի օգոստոսի 19-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Չուխաջյան փող., տուն 34/1, Երևանի պետական համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2022 թվականի ամառային զորակոչը.
- 6) Անդրանիկ Արթուրի Մուրադյանին (ծնվ. 1994 թվականի փետրվարի 9-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Դուրյան 37/7, Վարշավայի համալսարան, ասպիրանտուրա)՝ մինչև 2020թ. ամառային զորակոչը.
- 7) Հայկ Գեղամի Մանուկյանին (ծնվ. 1997 թվականի մայիսի 14-ին, հասցեն՝ քաղ. Երևան, Սունդուկյան 23 շ., բն. 80, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, մագիստրատուրա)՝ մինչև 2020 թվականի ամառային զորակոչը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՑԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

### **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումների համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները սահմանելու անհրաժեշտությամբ:

### **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

«Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանվել են գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները: Կրթության և գիտության նախարարի հրամանով ձևավորվել է տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողով: Կարգի 8-րդ կետով սահմանված նշանակալի նվաճումները հանձնաժողովի կողմից հաշվարկվում են բալային միավորների համակարգով՝ առավելագույնը 100 բալային միավորի սահմանաչափով, նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության հիման վրա՝ համաձայն ձևի: Մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակներում տարկետման իրավունքի հավակնություն են ձեռք բերում առնվազն 60, իսկ ասպիրանտական կրթական ծրագրի շրջանակներում՝ առնվազն 65 բալային միավոր հավաքած քաղաքացիները (Անդրանիկ Արթուրի Մուրադյան և Հայկ Գեղամի Մանուկյան):

Սույն որոշման նախագծով նախատեսվում է տարկետում տրամադրել նաև դպրոցականների հետևյալ առարկայական միջազգային օլիմպիադաներում մրցանակ ստացած քաղաքացիներ Հայկ Պարզևի Հարությունյանին և Ֆրունզ Արմանի Ղարազյոզյանին՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 7-րդ կետին համապատասխան, ինչպես նաև աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման <http://www.shanghairanking.com/> կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող կամ դիմորդ հանդիսացող Հովհաննես Վրեժի Զիջյանին, Սամսոն Արթուրի Պետրոսյանին և Արամ Հրանտի Հակոբյանին՝ հավելվածի 9.1 կետին համապատասխան:

### **3. Կարգավորման նպատակը և բնույթը**

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է ապահովելու օրենքի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառների բնականոն գործունեությունը և զարգացումը, այդ բնագավառներում ներդրում ունեցող քաղաքացիներին իրենց գործունեությամբ անընդմեջ զբաղվելու հնարավորությունների իրացումը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից նշանակալի նվաճումների վերաբերյալ եզրակացությունները հիմք են հանդիսանում քաղաքացիներին ՀՀ կառավարության որոշմամբ տարկետում տրամադրելու գործընթացն իրականացնելու համար:

### **4. Ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների իրացումը՝ նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու գործընթացում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կրթության և գիտության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: